

տաքըքիբ է նաև այն տեսակէտը, ըստ որի Թրակիան, որպէս ծայրամաս (բնականաբար նկատի ունենանք նաև Մակեդոնիան), առանձին սատրապութիւն չի կազմել եւ դեկլարուել է Սարգէսից³¹: Նման կարծիքի կարող է մղել այն հանգամանքը, որ, օրինակ՝ եգիպտական սատրապութեան մաս կազմող լիբիացիները (Փուտ-Լիբիա), եթովպացիները (Քուշ-Նուբիա) պարսկական սեպագիր արձանագրութիւններում յիշատակուած են առանձին-առանձին սահմանային շրջաններ³², այն դէպքում, երբ դրանք մտել են VI սատրապութեան մէջ, այսինքն՝ եւրոպական Թրակիան կարող էր սատրապութեան մաս կազմել³³: Սակայն, մեր կարծիքով, Հերոդոտոսի վերոնշեալ տեղեկութիւնը՝ «Երոպայում մինչև Թեսսալիա», յստակ սահմանադրում է

մէկ այլ, տուեալ դէպքում՝ Սկուզրա սատրապութեան գոյութիւնը, որի կենտրոնը ենթադրուել է Ֆիլիպուպոլիսը՝ ներկայիս Պլովդիւրը³⁴:

Այս սատրապութիւնը, յատկապէս՝ Արեւմտեան Թրակիան, յայտնի էր նաև ոսկու հարուստ հանքերով³⁵, ինչը պարսիկների համար կարեւոր նշանակութիւն ունէր յետագայ ռազմաքաղաքական ձգտումներում: Սկուզրացիները, որպէս գիւղատնտեսական աշխատողներ, յիշատակուած են Դարեհ Ա-ի Պարսքի եւ Էլամի արքայական կալուածքներում³⁶:

Այսպիսով, Սկուզրան կարող ենք համարել Աքեմենեան տէրութեան XXI սատրապութիւնը:

31 Նոյն տեղում, էջ 11, 15, 19-20: Հմմտ. E. Rehm, *The Impact of the Achaemenids on Thrace*, pp. 150-151:
 32 G. D. Bacheva, *Detecting a Satrapy: The Skudra Case*, p. 21.
 33 J. P. Sronk, *Crossing the Straits: The Persians in Thrace*, p. 68.

34 M. Brosius, *Pax Persica and the Peoples of the Black Sea Region*, p. 31; M. I. Vasilev, *The Policy of Darius and Xerxes towards Thrace and Macedonia*, p. 121.
 35 J. Balcer, *Persian Occupied Thrace (Skudra)*, p. 11.
 36 Т. Ю. Пашлова, *Фракийцы как подданные ахеменидов*, с. 48; M. Vassileva, *Persians in Thrace*, p. 322; E. Rehm, *The Impact of the Achaemenids on Thrace*, p. 148.

ՍԱԴՈՒՆ Բ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԾԽԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՎԻՄԱԳԻՐ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ ԱՂԲԻԻՐՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

Ռուբէն Գասպարեան

ՅԱՅՍ ԳԻՐ Է ՅԻՇԱՏ[ԱԿ] /..Ջ: Ի ՂԱ-ՆՈՒԹԷ ԱՊԱՂ[Ա ՂԱՆԻՆ] / [ԱԹ]ապակ ՍԱԴՈՒՆԻՆ: ԵՍ Հ.. Քարեղէն այս արձանագիրը¹ յայտնաբերուել է ներկայիս Կոտայքի մարզի Քանաքեռ ավանի (նախկին՝ Մուրադթափա²) մերձակայ Զովունի գիւղի հնավայրում: Աթապ(թ)ակ Սադունը ԺԳ. դ. քաղաքական ու ռազմական տաղանդաւոր գործիչ Մահկանաբերդցի Սադուն (Բ.) Արծրունին է: Ուսումնասիրողները բազմիցս անդրադարձել են վերջինիս գործունէութեանը: Յատկանշական են Հ. Մարգարեանի ուշադրաւ վերլուծութիւնները: Գիտնականն առանձին քննութեան նիւթ է դարձրել մասնաւորապէս Սադունեանցի Մահկանաբերդցի-Արծրունի իշխանական տոհմի ծագումնաբանութիւնը³:

Սակայն հարկ է վերստին անդրադառնալ միջնադարի այդ տաղանդաւոր գործիչ գործունէութեանը, որովհետեւ բա-

նասիրութեան մէջ վերջինս չի գնահատուել ու ներկայացուել ըստ արժանւոյն:

ԺԳ. դ. Մահկանաբերդցի իշխանի հասցէին ոչ այնքան դրական է խօսել ակադ. Ա. Գ. Յովհաննիսեանը: Անուանի հեղինակի գնահատմամբ՝ նա «բարոյական զապանակներից թափուր, ճարպիկ բանագնաց ու թարգման» էր⁴, եւ որպէս խնամակալ փոխարինելով Սիւնեաց իշխան Սմբատ Օրբելեանին՝ փորձել է օգտագործել վրաց թագուհի Գոնցայի վստահութիւնը՝ կործանելու «Սիւնեաց արքային» Հայաստանում եւ Անդրկովկասում սրա օրինակով իր դերքը բարձրացնելու համար⁵: Նման մտայնութիւն է իշխում նաև հեղինակի մէկ այլ արտայայտութիւնում. «Վրաց ժամանակագրութեան վկայութեամբ՝ Սադունն է, որ Գոնցայի միջոցով կապած է Աերշնուս Արդուհի մէջ՝ Սմբատի դիտաւորութիւնների հանդէպ՝ յուշելով այն միտքը, թէ անհրաժեշտ է օր առաջ ոչնչացնել վտանգաւոր այդ մարդուն»⁶:

Գիտնականի վերոնշեալ մեկնաբանութիւններին դժուար է համաձայնել, որովհետեւ հայկական ու վրացական սկզբնաղբերները պարզապէս սովորական ընթերցումը՝ նման եզրայանգումների առիթ չի ընձեռում: Գիտնականը Մահկանաբերդցի իշխանին վերոնշեալ՝ «բարոյական զապանակներից թափուր» մակերիւնքով բնութագրելիս, ամենայն հաւանականութեամբ,

1 Արձանագրութիւնը տրամադրել է վիմագրագետ Գ. Սարգսեանը, ինչի համար շնորհակալութիւն ենք յայտնում ի խորոց սրտի:
 2 Գտնում է Արագած լեռնազանգուածում՝ Երուսաղիմի արևմտեայն կողմի վրայ Սադունի անուամբ 1735 թ. յունիսի 8-ին լեռան ստորոտում Պարսկաստանի տիրակալ Նադիր շահը գլխովի ջախջախեց թուրքական բանակին: Տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների բառարան, կգմ. Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, հտ. 3, Երեւան, 1991, էջ 906:
 3 Հ. Մարգարեան, *Մահկանաբերդցիների (Սադունեանցի) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում*, Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. ԺԸ, Պէյրուք, 1998, էջ 10: Այսուհետեւ՝ *Մահկանաբերդցիների (Սադունեանցի) իշխանական տունը*:
 4 Ա. Գ. Յովհաննիսեան, *Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան*, հտ. 1, Երեւան, 1957, էջ 213: Այսուհետեւ՝ *Դրուագներ*:
 5 Նոյն տեղում:
 6 Նոյն տեղում:

ճայն՝ Սադուն Բ. Արծրունին յիշատակուած է առանց տիտղոսի. «ի թիս ՁԱ: Ի Հայրապետութեան տ[եառ]ն Կոստանդեայ, արհիեպիսկոպոսութեան Համազասպայ, եւ յաշխարհակալութեան եւ ի գաւրապետութեան Սաթունիս, ի թագաւորութեան Դաւթի»²⁹:

Դիւանը կազմող մեծագոյն Հեղինակները ծանօթագրութիւնում յաւելում են, որ «Սաթունի անուան տաւերը մասամբ ջնջուած են, բայց ընթերցուած են Հաւաստիօրէն (Սաթուն): Յիշատակուածը Ամիր Քրոյի ծոռն է՝ Կայեմի եւ Մահկանաբերդի մեծ իշխան Սադուն Բ.-ն, որը 1252-ին մեծ հեղինակութիւն էր վայելում. անուան յիշատակուած է թագաւորից առաջ՝ իբրեւ աշխարհակալ (այս դէպքում՝ երկրամասի տիրող, իշխան) եւ գորապետ, քանի որ նա արաբեկութեան պաշտօն էր ստացել 1270 թ.»³⁰: Հեղինակները զանց են առել արտօնագրի թուականը եւ իշխան Սադունին վերագրուող որոշիչ մակդիրները «յաշխարհակալութեան եւ ի գաւրապետութեան»: Անընդունելի է նաեւ որոշիչ եզրոյթների ծանօթագրութիւնը՝ (յաշխարհակալութեան = մեր կարծիքով՝ աշխարհը, երկիրը գրաւել, տէրը դառնալն է ընդգծում, եւ ոչ իշխան, իշխանաւոր լինելը): Պէտք է ընդգծել ու փաստել նաեւ, որ 1252 թ. իշխանը «մեծ Հեղինակութիւն չէր կարող վայելել». նա վերոնշեալ վրացական աղբիւրի վկայութեամբ՝ Աւագեան տան տոսկ խնամակալ-կառավարիչն էր³¹: Արտօնագրի թուականին պատշաճ ուշագրութիւն չի

29 Դիւան, պրկ. IX, Երեւան, 2012, էջ 264:
 30 Նոյն տեղում: Նշուած արտայայտութեան մէջ, մեր կարծիքով, սոցիալական անհամաձայնութիւն կայ: Արաբեկութիւնը վերաբերում էր երկրի ներքին գործառնութիւն եւ որպէս առանձին գործակալութիւն, ամենայն հաւանականութեամբ, ռազմական՝ «գաւրապետութեան» սպարապետ-սպասարարութեան հետ կապ չունէր: Թէեւ վրաց թագաւորութեան մէջ այդ երկու գործառնութիւնը բարձր տիտղոսաւոր պաշտօններ էին, եւ իշխանաւորները ձգտում էին դրանք համատեղել:
 31 Վրաց ժամանակագրութիւն, էջ 110. Հ. Մարգարեան, Մահկանաբերդի (Սաթունեանների) իշխանական տունը, էջ 22:

դարձրել նաեւ Վեհափառ, մեծանուն Հայագէտ Գ. Յովսէփեանը³²: Հաւանական է 2-ը հարիւրաւորի մէջ փորագրուած պէտք է լինէր Խ տասնաւորը, որը գուցէ անուշագրութեան է մատնուել. որպէսզի Համապատասխանէր իշխանի «յաշխարհակալութեան եւ ի գաւրապետութեան»-ը՝ (ամիրսպասալարութեան)³³:

Գրիգոր Ակնեցու Հաւաստմամբ՝ Մահկանաբերդի տիրակալը Հուլաւու իլխանի Հետ ծանօթացել ու մտերմացել է ըմբշամարտի ժամանակ՝ յաղթելով Մանգու խանի ուղարկած ահազող «մուրալ ազագաւ» ըմբշիչին. «այրն այն յոյժ ահագին, երկայն հասակաւ, թիկնեղ, շլինքն գերո գգովիշու, ձեռներն իբրեւ զարջու՝ զի ով տեսանէր զայրն զայն, զամէն վախէին»³⁴: Ըմբշամարտի ու նետածգութեան նկատմամբ, ինչպէս երեւում է բնագրից, մոնղոլներն առանձնապատուկ վերաբերմունք են ունեցել³⁵:

Ըմբշամարտի այդ միջադէպը հայրենագիտութեան մէջ հաւանական է, առաջինն է մեզանում, քանի որ յայտնում է մենամարտի տեղութիւնը եւ մրցման կարգը. «Էր ատուրն երեք ժամ մինչեւ ցվեց ժամն զիրար կարային երկուսն, եւ ոչ կարէին մէկ մէկի յաղթել»³⁶: Այսինքն, ըստ վկայութեան կարելի

32 Գ. Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, հտ. Ա, Երեւան, 1983, էջ 227 (այսուհետեւ՝ Նիւթեր):
 33 Նկատենք՝ Կ. Ղաֆադարեանը զշում է, որ «նոյնիսկ թուական ունեցող արձանագրութիւնների մկատմամբ էլ պէտք է ունենալ քննական մօտեցում, որովհետեւ նրանց մէջ պատահում են ուշ ժամանակների արտագրութիւններ» (տե՛ս Կարո Ղաֆադարեան, Տեկորի տաճարի V դարի հայերէն արձանագրութիւն եւ մետրոպէան այբուբենի ստաւիտ տառաձեւերը, ՊԲՀ, 1962, թիւ 2, էջ 39-54. նոյնի, էջեր հայ միջնադարեան մշակոյթի եւ պատմութեան, Երեւան, 2007, էջ 110):
 34 Գրիգոր Ակնեցի, էջ 48-49. Մաղաքիա Աբեղայ, էջ 34:
 35 Նոյն տեղում. Վրաց ժամանակագրութիւն, էջ 110: Հ. Մարգարեան, Մահկանաբերդի (Սաթունեանների) իշխանական տունը, էջ 22:
 36 Գրիգոր Ակնեցի, էջ 48-49. Մաղաքիա Աբեղայ, էջ 34-35:

է եղրակացնել, որ մրցապայքարը տուեալ ժամանակաշրջանում ընթանում էր երեք ժամով, հաւանաբար, մինչեւ կողմերից մէկի յաղթելը: Ցաւօք, յիշեալ տեղեկութիւնից ակնբերեալաբար դժուար է որեւէ Հետեւութիւն անել գօտեմարտի վարողի մասին: Հետաքրքիր է նաեւ այն իրողութիւնը, որ ըմբշամարտն աւարտուել է այն ժամանակ, երբ նրանցից մէկը գետնել է միւսին:

Գօտեմարտն ընթացել է Հուլաւու խանի ու ողջ մոնղոլական աւագանու ներկայութեամբ. «Հրամայեաց ժողովել ամ[ե-նայն] զյխարացն առաջի իւր, եւ կոչեալ զերկու բարայն»³⁷: Յիշատակութեան հազարէրկու մրցապայքարը տեւել է երեք ժամ՝ «երեք ժամ մինչեւ ցվեց ժամն»³⁸: Հայկազուն իշխանը՝ «յազգէն ի բարձր Արծրունի իշխանը, Սադուն անուան»³⁹, նեաց, թոռն ամիր Քրոյի, Սադուն անուան, ինչպէս զօրանալով Աստուծոյ անուամբ, ինչպէս գրուած է Գրիգոր Ակնեցին, իրոխտաբար գետնել է Հ(Ղ)ուլաւու խանի առաջ ահազու թաթարին. «գորացեալ անուամբ այ յանկարծակի ուժգին բախմամբ զգետնեաց առաջին շուտու դանին»⁴⁰:

37 Գրիգոր Ակնեցի, էջ 49. Մաղաքիա Աբեղայ, էջ 34-35:
 38 Ուտ Հ. Բաղայեանի՝ հրեաները, յոյները եւ հոնմեացիները ունեցել են օրուայ հետեւեալ բաժամանակները. ցերեկուայ 12 ժամերը բաժանուել են նորս մասի՝ իրաքանչիւրը բաղկացած երեք ժամից: Առաջին երեք ժամը նրանք անուանել են առաջին պահ՝ հաշուած Արեգակի ծագման պահից, երկրորդը՝ երրորդ պահ, նախորդից երեք ժամ յետոյ, երրորդը՝ վեցերորդ, Արեգակի ծագեցում յետոյ, երրորդը՝ իններորդ պահ, յոյս վեց ժամ յետոյ, եւ չորրորդը՝ իններորդ երեք ժամ անուան է Արեգակը մայր մտնելուց երեք ժամ անոջ (տե՛ս Հ. Ս. Բաղայեան, Օրացոյցի պատմութիւն, Երեւան, 1970, էջ 20):
 39 Գրիգոր Ակնեցի, էջ 49. Մաղաքիա Աբեղայ, էջ 34-35:
 40 Գրիգոր Ակնեցի, էջ 49. Մաղաքիա Աբեղայ, էջ 34-35: Պատմագրի հաւաստմամբ՝ Մանգու խանը ինչքան որ զոյս ձգէ, զայդ կապէր նմա հանգոյ. ապա թէ իմ բարեղ գըրնն ձգէ, յայնժամն զկապէր դմա հազոյ, եւ մեծ ելշով յա յարկեայ» (տե՛ս Գրիգոր Ակնեցի, էջ 47):

Ուշագրու է նաեւ այն հանգամանքը, որ իշխանը, լինելով Հաղպատի վանական միաբանութեան հաստատութեան տէր եւ հովանաւորող, օրհնութիւն ու հաղորդութիւն ստանալու համար գօտեմարտից առաջ փոքր-ինչ սրտնեղել է, քանզի, պատմագրի տեղեկութեամբ, խանի առջեւ երբեք չէր մենամարտել: Վերջինս «յանձնեաց զինքն վանորդիցն աղօթել վ[ա]յ[ն]ն[ն] Առ[ն]ալ եւ ինքն երթել ի Գագի սբ Սարգիս եկեղեցի, որտեղի առաջնորդն էր «սուրբ վարդապետ» Մեսրոպը: Վերջինս, ամենայն հաւանականութեամբ, միջնադարի այն հոգեւոր մեծանունն այրերից պէտք է լինէր, ովքեր բնորոշում էին որպէս «արիանակ բարեաց վարիք եւ բանի»⁴¹: Ցաւօք, պատմիչը չի մասնաւորեցրել որեւէ ակնարկով «սուրբ վարդապետի» գործունէութեան առանձնապատուկ կողմերը: Եկեղեցու հոգեւոր պետը քաջալերել է իշխանին իր աղօթքով ու օրհնութեամբ, իսկ վերջինս ուխտել ու մատաղ է արել Սբ. Նշանի առջեւ. «ի Գագ առ ատեանաս սբ Սարգիսն, գոր օրհնեաց երանելի եւ սբ վարդապետ Մեսրոպ եւ արարեալ անդ ուխտ եւ մատաղ արքոյն Աշանին»⁴²:

Գագի Ս. Սարգիս երբեմնի վեհաշուք եղբայրութեան մենաստանը ներկայիս Հայաստանի տարածքում չէ, սակայն, ինչպէս կռահելի է, մատենագիրն իշխանի Ֆիզիկական Հզօրութիւնը, նրա յաղթանակը, որոշակիօրէն աղերսում, կապում է Սբ. Սարգիս զօրավարի գորակցութեան աւանդութեան հետ:

Կիրակոս Գանձակեցու վերոնշեալ սեղմ տեղեկութիւնից կարելի է հետեւեցնել, որ հեղինակը, հաւանաբար, ծանօթ է գօտեմարտի անցուղարձին. «զի այդ քաջա-

41 Գ. Յովսէփեան, Նիւթեր, հտ. Ա, էջ 227. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ դար, Երեւան, 1984, էջ 435:
 42 Գրիգոր Ակնեցի, էջ 47. Մաղաքիա Աբեղայ, էջ 34:

մարտիկ էր, մինչ զի ընդ առաջին ախո-
յանիցն»⁴³:

Յաւօք, մատենագիրներից ոչ ոք գօ-
տեմարտի թուականը չի նշում: Ենթադր-
ւում է, որ այն տեղի է ունեցել Մուֆար-
դին քաղաքի պաշարումից առաջ, որի ան-
միջական գործուն մարտիկներից մէկն է ե-
ղել նաեւ Կայէնեցի Սաղուն Բ.-ն:

Կիրակոս Գանձակեցին, նկարագրելով
Մուֆարդին քաղաքի պաշարումը, գրա-
ւումն ու աւերումը Հուլաու խանի կող-
մից, նշում է, թէ աւերելով Բաղդադը⁴⁴
վերջինս, գարնան բացուելուն պէս գումա-
րելով զօրաբանակ, այն յանձնել է կրտսեր
որդի Ջիսսմութին եւ իր տան մեծ վերա-
կացու իլիգիա նոյին, որոնք պէտք է հնա-
զանդեցնէին Եփրատ գետի մերձակայ երկ-
րամասերը: Մոնղոլական զօրաբանակը

Մարտիրոսաց⁴⁵ քաղաքաբնակներից պա-
հանջել է գալ հնազանդութեան՝ «տալ զօրս
եւ հարկսն եւ կեալ անհոգութեամբ»⁴⁶: Քաղա-
քում գտնուող արաբ սուլթանը (խալիֆա-
թը) չի ընդունել վերջիններիս պահանջը,
եւ սկսուել է երկարատեւ ու սոսկալի ծանր
պաշարումը:

Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝
Հուլաու իլխանը ստիպուած է եղել Մու-
ֆարդին քաղաքը պաշարող զօրաբանակը
բաժանել երկու մասի՝ տարբեր ազգութեան
հրամանատարներով: Ամենայն հաւանա-
կանութեամբ այդ հրամանատարներն աչ-
քի պէտք է ընկած լինէին իրենց մարտա-
կան քաջութեամբ ու հնարամտութեամբ:
Վերջիններս, պատմիչի հաւաստմամբ,
ծայրայեղ խստացրել են պաշարուածներին
առանց այն էլ օրհասական վիճակը. «եւ
զլխատրաց կացոյց ի վերայ զօրացն զՉաղա-
տայ ոմն, եւ ի քրիստոնէից՝ զիշխանն Պոօշ,
զոր Հասան կոչէին, արք քաջ եւ անուա-
նիք, երթալ պաշարել զքաղաքն յամենայն
կողմանց եւ ոչ տալ թոյլ մտնողի եւ լողի»⁴⁷:
Դէպքերը տեղի են ունեցել, պատմիչի յի-
շատակմամբ «զԶԹ (1260) թուականին Հա-
յոց»⁴⁸: Դատելով պատմիչի «հզօրապէս
մարտնչելին» արտայայտութիւնից՝ կարելի է
հաստատապէս պնդել, որ հայկական ռազ-
մական ուժերը մարտնչել են քաջութեամբ

43 Կիրակոս Գանձակեցի, էջ 386:
44 Նոյն տեղում, էջ 384. Հեթում, պատմիչ Թաթար-
րաց. յղեալ ի շատին օրինակէ, Մկրտիչ վրդ. Աւ-
գերեան, Վեներտիկ, 1842, էջ 45: Անանուն ժամա-
նակագրութեան հեղինակը վկայում է, որ «ի
թուին 2Է (1256) քաջ Հուլայուն առ Պաղտատ
զոր շինեալ Ջաֆր Իսմայէլացի, ի նոյն ամի ա-
ռաքեաց Հուլայունն զարս ի վերայ Մուֆարդ-
նայ, եւ խսարեցին զքաղաքն Բ ամ, եւ սաստիկ
նեղեալ ի սովոյ կերան զմիմեանս զի լիտր մի
մարդոյ միս ի Ծ դեկան եղել. 2Թ առին Մուֆար-
դին» (տե՛ս Անանուն ժամանակագրութիւն, Երե-
ւան, 1940, էջ 23. Հեթում, էջ 45). Ռաշիդ-ադ-դի-
նը վկայում է, որ «Հուլաու խանի հրամանով ար-
քայագն իւշմուտը եւ աւագ Էմիրներից Էլեկէ-
նոյինը ու Սոնտա-ճոյինը ելան արշաւի: Երբ
հրանք հասան Մաֆարդինի սահմանին, վեր-
ջիններս սուրհանդակ ուղարկեցին մելիք Կոմի-
լուն եւ նրան եմթարկման ու հնազանդութեան
կոչ արեցին» (տե՛ս Рашид ад-Дин, Сборник ле-
тописей, т. III, Москва-Ленинград, 1946, էջ 54.
Յ. Մանանդեան, Երկեր, հտ. Գ, Երեւան, 1977,
էջ 244. Լ. Մարգարեան, 11-14-րդ դարերում հայ-
իրանական կապերի պատմութիւնից (Մահիթ դի-
ւան Ծամս ադ-դին Ջուվէյնի եւ Հայաստանը), Ա-
րեւելագիտութեան ժողովածու, հտ. V, 2004, էջ
114: Այսուհետեւ՝ 11-14-րդ դարերում հայ-իրա-
նական կապեր): Բաղդադի գրաւումով վերջ է
տրուում Արաբական 500 տարուայ խալիֆայու-
թեանը:

45 Վ. Յարութիւնեանը նշում է, որ Տիգրանակերտի
մնացորդների վրայ է կառուցուել Արեւմտեան
Հայաստանի վաղմիջնադարեան քաղաքներից
մէկը՝ Նփրկերտը (բիզանդական անուանումը՝
Մարտիրոպոլիս) (տե՛ս Վ. Մ. Յարութիւնեան,
Խորենացիի հին հայկական քաղաքաշինութեան
եւ ճարտարապետութեան մասին, ՊԲՀ, Երե-
ւան, 1994, թիւ 1-2, էջ 202:
46 Կիրակոս Գանձակեցի, էջ 385:
47 Նոյն տեղում:
48 Նոյն տեղում, էջ 385, 387. Վարդան Արեւելցու
վկայութեամբ՝ քաղաքի գրաւումը տեղի է ունե-
ցել 1259 թ. «Յեօթն հարիւր եւ ինն թուին առա
Մարտիրոսաց քաղաքն զկնի յուլով ալէտից եւ
վնասուց» (Մանր ժամանակագրութիւններ, XIII-
XVIII դդ., հտ. 1, Երեւան, 1951, էջ 45. Լ. Լ. Բա-
բայեան, նշ. աշխ., էջ 305):

ու անձնուրացութեամբ: Քաղաքի ու միջ-
նաբերդի գրաւման 40-օրեայ մարտերում
աչքի է ընկել նաեւ Մահկանաբերդցի իշ-
խանը, ով վիրաւորուել է⁴⁹:

Մուֆարդին⁵⁰ քաղաքը գրաւելուց յե-
տոյ, մոնղոլները յարձակուել են «ամրա-
գոյն երկիրն» Սասունի վրայ: Մատենագրա-
կան տեղեկութիւնները ցուցում են, թէ
երկրամասը գրաւելուց առաջ սասունցիներ
հետ բանակցել է Սաղուն Բ. Արծրու-
նին: Յուսարդուելով իշխանի կողմից՝ սա-
սունցիները «եկին հնազանդութիւն ծառայու-
թեան թաթարին, ապաւինեալք յիշխանն
Սաղուն» յորդի Օերթարոքին, քրիստոնէայ հա-
ւատով եւ մեծ պատուով առ Հուլաու, զի այր
անձնեայ քաջամարտիկ էր»⁵¹: Մահկանա-
բերդցի իշխանի բանակցութիւնները Սա-
սունի ժողովրդի հետ, հաւանաբար, խրա-
խուսուել են խանի կամ, աւելի ճիշտ, հա-
յոց զօրաբանակի գլխաւոր հրամանա-
տարի՝ սպարապետ Պոօշ Խաղբակեանի կո-
ղմից, քանի որ Սասունը գրաւելուց յետոյ
տեղի կառավարումը յանձնուել է վերջի-

նիս: Սակայն մոնղոլների ուխտադրու-
թեան պատճառով, հաւանաբար, վերջինս
երկար չի մնացել Սասունում. «ամա ետ
զգաւառն Սասնոյ, զոր յետոյ ստեցին երդ-
մանն»⁵²: Հետաքրքիրն այն է, որ յիշեալ
վկայութեան համաձայն՝ մարտական գոր-
ծողութեանը որոշակի մասնակցութիւն է
ունեցել նաեւ իլխան Հուլաու: Վերջինս
Սաղունին կարգել է առաջնակարգ քաջա-
համբաւ կտրիճներ (հաւանաբար՝ մոնղոլ
մարտիկների) շարքում. «մինչ զի ընդ առա-
ջին այսոյանիցն կարգեալ էր զնա Հու-
լաու»⁵³:

Այսպիսով, հաւանական է, որ ըմբռ-
մարտը տեղի է ունեցել 1256 կամ 1257 թ.
սկզբին, քանի որ Հուլաու իր մեծաթիւ
բանակով 1253 թ. դուրս է եկել Կենտրո-
նական Մոնղոլիայից եւ 1256 թ. հասել Ի-
րան, որտեղ ծնկի էր բերել իսմիայիլիանե-
րին՝ հիմնովին աւերելով 40 անառիկ ամ-
րութիւն, եւ հիմնադրել իր նոր պետութիւ-
նը՝ Ի(է)լխանութիւնը⁵⁴:

Մահկանաբերդցի իշխանի ծանօթու-
թիւնը եւ մտերմութիւնը Հուլաու իլխանի
հետ, ինչպէս նկատեցինք, ամենայն հաւա-
նականութեամբ սկիզբ է առել գօտեմար-
տում յաղթելուց յետոյ⁵⁵: Սակայն, կար-

49 «Քառասուն օրից աւելի ձգուեց պաշարումը: Եր-
կու կողմից օգտագործուել էին քարանետ սար-
քեր եւ գաղտանցքերից արձակուել էին նետեր:
Էմիր Անդշու-Օուքուրչու եւ վրացի Սաղիկի դէմ-
քերի մասերին կային տարբեր վերքեր, որոնք ե-
ղել էին առաջապահ զօրաբանակում» (տե՛ս
Рашид ад-Дин. Сборник летописей, т. III, стр.
49-50): Ըստ հեղինակի՝ դէպքը տեղի է ունեցել
Հալեպը գրաւելիս: Ուշագրաւ է, որ Ռաշիդ ադ
Դինը մի դէպքում իշխանի անձնանունը գրել է
Սաղիկ, իսկ միւսում՝ Սաղուն: Սա, անշուշտ, նոյն
անձնանուններն են: Սամուել Անցեցի, էջ 151.
ՀԺՊ, հտ. 2, էջ 300. Լ. Լ. Բաբայեան, նշ. աշխ.,
էջ 306:
50 Ստեփանոս Օրբելեանը քաղաքը կոչում է
Նփրկերտ՝ «քաղաքին Մարտիրոսաց որ Նփր-
կերտ կոչի», սակայն Բաղդադի գրաւումը նկա-
րագրելիս պատմիչը գրում է. «Էւո գԲաղդադ
քաղաք եւ եսպան զխալիֆայն ի 707 թուին. եւ
զՄուֆարդինն էւո ի 708 թուին» (տե՛ս Ստեփա-
նոս Օրբելեան, էջ 402, 404): Միւսիւր Այրիվա-
նցին քաղաքն անուանում է «զՄուֆարդին»
(տե՛ս Միւսիւր Այրիվանցի, Պատմութիւն հա-
յոց, Մոսկուա, 1860, էջ 67):
51 Կիրակոս Գանձակեցի, էջ 386:

52 Նոյն տեղում:
53 Նոյն տեղում, էջ 384-387:
54 Լ. Լ. Բաբայեան, նշ. աշխ., էջ 302: Կարծում ենք՝
գօտեմարտը տեղի է ունեցել այդ թուականին, ո-
րովհետեւ 1258 թ. իշխանը մասնակցել է Ասորի-
քի արշաւանքին:
55 Պ. Յովսէփեանը գօտեմարտի մասին գրում է.
«Այս դէպքը պատահել է 1256 թ. ոչ առաջ, երբ
Հուլաու հաստատեց իր իշխանութիւնը Պարս-
կաստանում, եւ ոչ ուշ քան 1260 թ., երբ Սաղունն
արդէն պատուար դիրք ուներ Հուլաուի առաջ»
(Պ. Յովսէփեան, Չազաւանից ժողովը, Վաղար-
շապատ, 1913, էջ 27): Իրաւացի է անուանի բա-
նաւորը, սակայն իշխանն այդ տարիներին եղել
է «տանն Աւագին» սենեկապետ «էջիբը» (Վրաց
ժամանակագրութիւն, էջ 120, 129, 139. Դիւան,
պրկ. VI, էջ 204. Լ. Մարգարեան, Մահկանա-
բերդցիների (Սաղունեանների) իշխանական
տուճը, էջ 22:

ծովում ենք, այն առեղի խորացած ու ամրապնդուած պէտք է լինի, ամենայն հաւանականութեամբ, Մուֆարդիւնի ու Սասունի գրաւման ժամանակ: Նման եզրայանգման կարելի է գալ վրացական աղբիւրի վկայութիւնից. բառացի ասուած է, որ Ուլուն՝ Հուլաուու իլխանը, սիրում էր նրան, այսինքն՝ արդէն ճանաչուած էր. «Մադունի թարգմանիչ բերէից, որին Ուլուն շատ էր սիրում, մեծապէս պատիւ տալիս, որովհետեւ խելացի մարդ էր, քաղցրալեզու, խանի մօտ ճարտասանութեամբ յաջողակ»⁵⁶: Մի փոքր անհասկանալի է տարբերի վկայութեան վերջին արտայայտութիւնը՝ «խանի մօտ ճարտասանութեամբ յաջողակ»: Արդեօք մինչեւ այդ միջադէպը իշխանը նախկինում խանի մօտ երբեւէ աչքի էր ընկել «յաջողուած ճարտասանութեամբ»: Սկզբնաղբիւրից սա դժուար է կռահել:

Աղբիւրների վկայութեամբ՝ Մահկանաբերդցի իշխանի յաջողութեան առաջին նախապայմանը, որ իրաւացիորէն ընդգծուած է Հ. Մարգարեանը, ոչ թէ նրա քաղաքական, ռազմական կամ տնտեսական հզօրութիւնն է, այլ անձնական յատկանիշները, խելամիտ վարչական ծառայութիւնը եւ մտերիմ կապերը՝ իլխանութեան վարչաբիւրոկրատական վերնախաւի հետ⁵⁷:

Վրացական սկզբնաղբիւրի երկրորդ վկայութիւնը Մահկանաբերդցի իշխանի մասին կենսագրական բնոյթի է եւ որոշակիորէն տարբերուած է նախորդից: Այն Հ. Մելիքսեթ-Բեկի թարգմանութեամբ այսպիսին է. «Այս պահին Սադուն Մահկանաբերդցին սկսեց ուժեղանալ, սրան նախ Ուլոյ [ղափնն] եղաւ հովանաւոր, ապա Աբաղան դաւան էլ պատուեց, ինչպէս եւ Սահիբ դիւանը, քանի որ նրա կողմէ՝ Աւագի դստեր խուս-

շագի շնորհիւ սենեկապետի (նեջիբի) պաշտօն ստացաւ»⁵⁸:

Նկատելի է, որ խնդրոյ առարկայ բնագիրը համարեա համընկնում է Վրաց ժամանակագրութեան 129-րդ էջի բնագրին (տարբերութիւնը՝ այս պահին / ընթացքում): Ուշագրաւ է այն, որ Վրաց ժամանակագրութեան բնագրում խօսուած է նաեւ ըմբշամարտի մասին՝ «սկզբում ըմբշութեան շնորհիւ Ուլոյի կողմից սենտրուեց», իսկ վերոնշեալ թարգմանութիւնում բովանդակութիւնը զարմանալիորէն մի փոքր այլ է «սրան նախ Ուլոյ [ղափնն] եղաւ հովանաւոր»⁵⁹: Եթէ դրանք թարգմանիչների առանձնակի մօտեցումները չեն, ապա կարելի է կարծել, որ մեծարգոյ գիտնականներն օգտուել են տարբեր ձեռագիր ընդօրինակութիւններից:

Ինչեւէ, Հ. Մելիքսեթ-Բեկի թարգմանած իշխալ բնագրի վկայութեան համաձայն՝ Մահկանաբերդցի իշխանին հովանաւորել է նախ Ուլուն՝ Հուլաուու իլխանը: Այնուհետեւ վերջինիս մեծարել ու հովանաւորել է նաեւ իլխանի որդին՝ Աբաղան (1265-1282): Դատելով իշխանագրից՝ իշխանը ջերմ, նոյնիսկ մտերիմ յարաբերութիւններ է ստեղծել նաեւ իլխանութեան ֆինանսների դիւանի ղեկավար, առաջին վեզիր խոջայ Սահիբ դիւան Ջուվէյնու հետ, ով պարսկական ծագում ունէր⁶⁰: Յիշատակագիրը հաւաստում է

58 Հ. Մելիքսեթ-Բեկ, Աշխ., հտ. Բ, էջ 59. Վրաց ժամանակագրութիւն, էջ 139: Հ. Մելիքսեթ-Բեկի թարգմանութիւնները բաւականին մեծածաւալ աշխատանքներ են, սակայն մեզ հետաքրքրող բնագրերի վկայութիւնները թուում են ոչ լիարժէք, թերի եւ դժուարըմբռնելի՝ Պ. Մուրադեանի թարգմանած «Վրաց ժամանակագրութեան» համեմատութեամբ: Մեր նպատակից դուրս է արժեւորել այդ աշխատանքները, որոնք յաճախ իրարից շատ չեն տարբերում, սակայն կամայ, թէ ակամայ հարկ է դրանք համադրել:

59 Վրաց ժամանակագրութիւն, էջ 129:

60 Իրաւացի է Հ. Մարգարեանը՝ նկատելով, որ երկու հարեւան երկրները՝ Իրանը եւ Հայաստանը, ԺԳ.-ԺԴ. դդ. յայտնուեցին մոնղոլական աշ-

56 Վրաց ժամանակագրութիւն, էջ 120:
57 Հ. Մարգարեան, Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը, էջ 16:

նաեւ, որ Սահիբ Դիւանի կնոջ՝ Խուշաբի (Խոշաբ) միջնորդութեան շնորհիւ Սադուն Արծրունին հաստատուել է Աւագեան տան սենեկապետի պաշտօնում: Այսինքն՝ Մահկանաբերդցի Սադուն Արծրունին Աւագեան տան ղեջուր-սենեկապետի պաշտօնը ձեռք է բերել Սահիբ Դիւանի ու Խոշաբ Զաքարեանի ամուսնութիւնից յետոյ, հաւանաբար՝ վերջինիս բարեխօսութեան, միջնորդութեան շնորհիւ:

Վրաց ժամանակագրութեան 129-րդ էջի սկզբնաղբիւրը կարեւորում է եւս մէկ ուշագրաւ հանգամանքով. պատմական տուեալ իրողութիւնը ներկայացուած է ներկայ ժամանակով (եթէ, իհարկէ, սրբագրական վրիպակ չէ). «Մեծ սահիբդիւանը եւս բարութեամբ է վերաբերում, որովհետեւ [Սադունը] նրա կողմէ՝ Աւագի դուստր Խուշաբի սենեկապետն էր [եջիբը]»⁶¹: Այսինքն՝ Սահիբ Դիւանը յարգալից, բարութեամբ է վերաբերուել իշխանի նկատմամբ, քանի որ վերջինս մինչեւ այդ, հաւանաբար՝ մինչեւ խոջայի ու իշխանուհի Խոշաբի ամուսնութիւնը, եղել է կնոջ հեղուր-սենեկապետը: Մինչդեռ Հ. Մելիքսեթ-Բեկի թարգմանութեամբ՝ բոլորովին այլ պատմական իրողութիւններ են արձանագրուած:

Վրաց ժամանակագրութեան նշալ բնագրում արծարծուող դէպքերի հիման վրայ որոշակի տարբերիւ նշել դժուար է, քանզի տարբերը խօսում է Հուլաուու իլխանի ժամանակ ըմբշամարտի, ապա Աբաղայի, Սահիբ Դիւանի ու իշխանուհի Խոշաբի ամուսնութեան, ինչպէս նաեւ իշխանի հեղիբութեան մասին:

Նկատենք, որ ժամանակագրի յայտնած պատմական այս եղիւթիւնները համահունչ չեն վրացական միւս վկայագրերի

տեղեկութիւններին. վերոնշեալ վրացական առաջին բնագրից տեղեկանում ենք, որ մինչեւ գօտեմարտը Մահկանաբերդցի իշխանն պրդէն դարձել էր Աւագեան տան վերահսկիչ կառավարիչը, այն էլ՝ վրաց թագաւորի միջնորդութեամբ: Եւ հիմնաւորուած է Հ. Մարգարեանի այն թեզը, թէ «մինչեւ ԺԳ. դարի 50-ական թուականների վերջը Սադունը գործում էր սահմանափակ շրջանակներում՝ ընդամենը Աւագ Զաքարեանի դուստր Խոշաբի խնամակալն էր եւ սենեկապետը»⁶²: Ըստ հեղինակի՝ նա «դեռեւս 1258 թ. Խոշաբին ենթակայ պաշտօնեայ էր»⁶³, եւ, ինչպէս փաստում են սկզբնաղբիւրները, 1269-1270 թթ. եւս իշխանն է եղել Աւագ-Խոշաբեան տան պաշտօնեայ հեղուրը:

Իշխանի «հարկօք» մեծարանքը, ինչպէս նկատեցինք, ըստ սկզբնաղբիւրի՝ ամրապնդուել է Հուլաուու իլխանի դէպի Ասորիք կատարած արշաւանքի ընթացքում: Այդ վարկածը փաստում ու հաստատում է նաեւ վրացական աղբիւրը՝ 1261 թ. Հորդայում հրաւիրուած բարձր վեհաժողովի իրողութեամբ: Տարբերի վկայութեամբ, մոնղոլական աւագանին իլխանի գլխաւորութեամբ վրաց թագաւոր Ուլու Դաւթից ու Սամցխէի ամիրսպասալար Սարգիս Զաղէլ-Յիսիսընարեւուց հաշիւ է պահանջել երկրում երկրորդ անգամ ապստամբութիւն հրահրելու առիթով:

Անտեսելով վրաց տարբերութիւնում ժողովրդական բանարուեստի տարբերով համեմուած պատմելաոճը (թագաւոր Դաւթի սարսափից «կարկամելը», եւ, դրան հակառակ, առաւել անհաւանական՝ Սարգիս Զաղէլի «կատաղած առիւծի տեսք ունենալ»)՝ յաւելենք, որ, ամենայն հաւանականութեամբ, դա վրաց տարբերի մեկնութիւնը պէտք է լինի, ինչը, ակնյայտօրէն, տարբերուել է Սադուն Արծրունու «քաղց-

խարհակալ պետութեան կազմում, ինչի արդիւնքում հայերի ու պարսիկների միջեւ կրկին ծաւալուեցին սերտ ու բազմակողմանի կապեր (տե՛ս Հ. Մարգարեան, 11-14-րդ դարերում հայ-իրանական կապերի պատմութիւնից, էջ 111):
61 Վրաց ժամանակագրութիւն, էջ 129:

62 Հ. Մարգարեան, Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը, էջ 22:
63 Նոյն տեղում:

րալեզու, խելամիտ իմաստութեամբ»՝ դրսեւորուած «դիւանագիտական տաղանդից», որի շնորհիւ վերջինս ներողամտութիւն է «Անտարկէլ» թէ՛ իլխանին եւ թէ՛ ներկաներին, ինչպէս տարեգիրն է ընդգծել, «չվնասելու» վրաց թագաւորին ու նրա աւագանունն⁶⁴:

Պատմական յիշեալ իրողութիւնը, ամենայն հաւանականութեամբ, հաստատուում է նաեւ «Անանուն ժամանակագրութեան» հետեւեալ տեղեկութեամբ. «ի տյն ամի Հուլայու ի դառնալն գթագաւորն վրաց գրաւիթ եւ զիշխանս աշխարհին սիրով պատուեց»⁶⁵: «Աշխարհին սիրով պատուեց»՝ ակնյայտօրէն նշանակում է խանը Վրաստանի, վրաց թագաւորի եւ վրաց իշխանական վերնախաւի նկատմամբ ներողամտութիւն է ցուցաբերել, քաղաքական ինչ-ինչ իրավիճակներից ելնելով՝ զիջել ու բարեացակամօրէն է վերաբերուել վերջիններին հետ⁶⁶: «Աշխարհին սիրով պատուեց» արտայայտութիւնը կարելի է հիմնաւորել նաեւ նրանով, որ Ոսկէ Հորդայի խան Բերքայի անսպասելի յարձակմանը դիմադրակելիս աչքի են ընկել վրաց թագաւորն ու նրա

ուղղմական ուժերը⁶⁷: Անշուշտ, յիշեալ մարտական գործողութիւններին պէտք է անվերապահօրէն մասնակից լինէր նաեւ «թարգմանիչ» Կայենեցի իլխանը, որի մասին վրացական աղբիւրը լռում է: Սակայն «Անանուն ժամանակագրութեան» բնագիրը փաստում է, որ իլխան Հուլաուն «Վրաց գրաւիթ եւ զիշխանս աշխարհին սիրով

67 Վրաց ժամանակագրութիւն, էջ 120: Վարդան Արեւելցի ուշագրաւ ձեռով է ներկայացրել «հիւսիսային» ու «հարաւային» մոնղոլ-թաթարների միջեւ բորբոքուած արիւնաքամ այդ պատերազմը: Ըստ հեղինակի՝ Հուլաուն ներկայացրել է, որ «մեր եղբայրները մեր դէմ կոխ են վարում», որովհետեւ, խանի հաւաստմամբ, վերջիններս սիրում են քրիստոնէաներին, ու քրիստոնէութիւնը մուտք ունի իրենց արքունիքում: Դրան հակառակ, նրանց եղբայրները սիրով են մահմեդականների հետ ու նրանց մօտ մահմեդական կրօնն է իշխում: Ի հարկէ կրօնի տարբերութիւնը կարող էր որոշակի դեր խաղալ, սակայն, ինչպէս սկզբնաղբիւրներն են փաստում, Հիւսիսային թաթարները փորձել են իրենց գերիշխանութիւնը տարածել ամբողջ հարաւային՝ Հուլաու խանի պետութեան վրայ: Մարկո Պոլոն վկայում է, որ «1261 թ. երկու մեծ իշխանները կոտեցին իրար հետ. Արեւելեան թաթարների իշխան Հուլաուն եւ Արեւմտեան թաթարների իշխան Բարկան: Վեճի պատճառը երկու իշխանների պետութիւնների սահմանակից մահաճգնների խնդիրն էր: Նրանցից իւրաքանչիւրը ցանկանում էր տիրել այդ մահաճգններին եւ ոչ ոք չէր ուզում միսին տեղի տալ» (Գ. Ալթունեան, *Մոնղոլները եւ նրանց արշաւանքները ԺԳ. դարերում*, Վաղարշապատ, 1913, էջ 44. Մարկո Պոլո, С. 221, S. 338):

Այս կապակցութեամբ Յ. Մանանդեանը գրել է, որ Առաջաւոր Ասիայում սկիզբ են առել երկպառակութիւններ Ոսկէ Հորդայի Ջուլեանների եւ Հուլաւեանների միջեւ: Ըստ հեղինակի՝ Հուլաուի արշաւանքին մասնակցել են նաեւ Բաթուի եւ Բերքայի ազգականները, խաների արքայազն որդիները, որոնք իրենց համարելով անկախ իշխաններ՝ ըմբոստացել են Հուլաուի դէմ: Ուստի վերջինս հրամայել է սրատել նրանց իրենց գօրաշնչկատներով: Բերքա խանը Հուլաուից ցանկացել է վրէժ լուծել սրա համար: Սակայն, հեղինակի հաւաստմամբ, իրականում Ոսկէ Հորդայի խաները ցանկացել են տիրանալ Անդրկովկասին, գլխաւորապէս Պարսկական Աղբիւրների ու Թարիզի, որտեղով անցնում էր համաշխարհային առևտրի մեծ ճանապարհը (տե՛ս Յ. Մանանդեան, *Աշխ.*, հտ. Գ, էջ 251, 252):

64 Վրաց ժամանակագրութիւն, էջ 120. Հ. Մարգարեան, *Մահկանաբերդիների (Սադունեանների) իշխանական տունը*, էջ 23:

65 Անանուն ժամանակագրութիւն, էջ 22:

66 Վրաց տարեգիրը պատմական այդ դէպքերի զարգացումը մասին գրելիս նշում է այն հանգամանքը, որ մոնղոլական արքունիքում Հուլաու խանի քրիստոնէայ կիճը՝ Տօնդուգ-խաթունը եւ Ենուք Արքունը միջամտում են գործերին՝ համոզելով տիրակալին (Հուլաուին) ցուցաբերել քաղաքական աշարքութիւն. «Բո եղբայրը, մեծ խան Բաթուի որդին բազում առաքեալներ է հեղում ու մեծ շնորհներ բաժանում, որպէսզի [իրեն] տան Դարիալանի ու արեւմտաքի ճամփան, ... ինչո՞ւ ես մի մեծ տիրակալի հրում քո թշնամիները, որովհետեւ եթէ Բաթուի ուղուք (գօրքը) ու թագաւորը միացան՝ մեծ շփոթներ կարծրանան» (Վրաց ժամանակագրութիւն, էջ 118): Հետոյ պատմիչը Հուլաուի կնոջ մասին գրում է. «կինն Հուլաուի Դուկուսարոն անուն՝ քրիստոնէայ» (Հետոյ, էջ 46). Ռաշիդ ադ Դիւնը Հուլաուի կանանցից յիշատակում է եւս մէկին՝ «Քուրա խաթունին» (Рашид ад-Дин, *Сборник летописей*, т. III, էջ 69):

պատուեց»⁶⁸: Այս վկայութեամբ հաստատուում է վրացական վերոնշեալ պատմական իրողութիւնը: Իլխան Հուլաուն ներողամտաբար է վարուել՝ ելնելով ստեղծուած իրավիճակից, հաշուեյարդար չի տեսել վրաց արքունիքի հետ:

Ըստ Հ. Մարգարեանի՝ Աբաղայի իլխանութեան ժամանակ Սադուն Բ. Արծրունու դիրքերը աւելի են ամրապնդուում Վրաստանում եւ Հայաստանում⁶⁹: Ցաւօք, գիտնականը չի մասնաւորեցրել, թէ Հայաստանում ինչպիսի պարագաների փոփոխութեամբ է պայմանաւորուել իլխանի դիրքերի ամրապնդումը: Հաւանական է՝ իլխանի շօշափելի դիրքի մասին է վկայում «Մեկնութիւն Դանիելի Վարդանայ Արեւելցու» ձեռագիր յիշատակարանի տեղեկութիւնը. գրիչը փաստում է, որ մատենը սկսել է ընդօրինակել ՉԺԶ (1267) թ. Սբ. Վիրապի հոգեւոր օջախում, իսկ յաջորդ տարի՝ ՉԺԷ (1268) թ. շարունակել է Աղջոց Սբ. Ստեփանոսի վանքում Երեմիա «գովելի ասպնջակնի» վանահայրութեան ժամանակ: Ուշագրաւ է նաեւ այն հանգամանքը, որ յիշատակագրում մատենագիրը հայցում է «Քրիստոսի սիրոյն ներողամիտ լինել» «խալանացն մեր յամենայն իրս եւ ի գիրս յայս» եւ երախտաւորութեամբ յիշել «պարուսն Սադունին, Սմբատայ, Քրդին, Պուաշայ»⁷⁰: Վար-

դան Արեւելցու վկայութեան համաձայն՝ Հայաստանում տուեալ ժամանակաշրջանում առաւելագոյն յայտնի են չորս նշանաւոր աւատական տանուտէր-իլխանաւորներ, որոնց շարքում 1267-1268 թթ. պարոն իլխանական տիտղոսով առաջինը յիշուել է Մահկանաբերդիցին: Այս իրողութիւնը հաստատում է նաեւ Առաքելոց վանքի խաչքարի 13-տողանոց արձանագրութիւնը, որտեղ Մահկանաբերդիցին կոչուում է «մեծ իշխանաց իլխան». «Ի թուիս հայոց ՉԺԶ (1267) իշխանութե մեծ իլխանաց իլխանին Սադունի եւ յառաջնորդութե մեծ վարդապետին Առաքելին»⁷¹: Իլխանի «աստուածասէր» լինելու մասին են վկայում նոյն մենաստանի ՉԻԳ (1274), եւ ՉԻԲ (1273) թուականների քարեղէն բնագրերը⁷²:

Հաւանաբար, այդ տասնամեակի վերջերով պէտք է թուագրել նաեւ Պ. Մուրադեանի թարգմանութեան յաջորդ՝ 139, 140 էջերի տեքստի վկայութիւնը. «Այս ընթացքում Սադուն Մահկանաբերդիցին հօգուցել էր իրեն ժամանակակից բոլոր իշխաններից աւելի, որովհետեւ սիրեց նրան Աբաղա խանը: Ու [Սադուն] սկսեց խմամակալ լինել Վրաստանի գործերին, որովհետեւ [թագաւորը] նրա տէր Աւագ աթաբեկի աղջկայ [մասին հոգալ] յանձնարարեց Սադունին, իսկ Խուաշագը Էջիբութիւն տուեց նրան»⁷³: Դատելով վկայութիւնից՝ ակնյայտ զգացում է Մահկանաբերդի իլխանի սոցիալ-քաղաքական իրավիճակի փոփոխութիւնը: Բնագրի հաւաստմամբ՝ Աբաղայի իլխանութեան օրօք Մահկանաբերդիցին հօգուցել է իր ժամանակակից բոլոր իլխաններից աւելի՝ վերջինիս հովանաւորութեամբ: Սակայն տարեգիրը չի մասնաւորեցրել, թէ ինչ պարա-

68 Անանուն ժամանակագրութիւն, էջ 22:
69 Հ. Մարգարեան, *Մահկանաբերդիների (Սադունեանների) իշխանական տունը*, էջ 23:

70 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար, էջ 365-366. Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռեանք հայոց պատմութեան մէջ*, Վաղարշապատ, 1928, էջ 97: Այսուհետեւ՝ *Խաղբակեանք*: Փ. Անթապեանը ձեռագիր յիշատակարանի առիթով գրում է. «տեղափոխութիւնը ունեցել է քաղաքական շարժառիթ, ըստ երեւոյթին, մոնղոլների ամենօրեայ խոցումներից համեմատաբար աւելի ապահով եւ Պոռեանքների տանը, յատկապէս Քուրդ իլխանին աւելի մօտիկ լինելու համար, այդ քայլն արուել է, որպէսզի վայելէին նրանց աջակցութիւնը» (տե՛ս Փ. Անթապեան, *Վարդան Արեւելցի*, Երեւան 1987, էջ 42): Հաւանական է՝ Փ. Անթապեանի խօսքում առկայ

է անճշտութիւն. պէտք է լինի «Վաչուտեանների տունը», քանզի Քուրդը Վաչուտեան էր, եւ Վարդան Արեւելցին գնացել է Սադունապատ, որտեղից տեղափոխուել է այլ վանքեր:
71 Դիւան, արկ. VI, էջ 211:
72 Նոյն տեղում, էջ 210, 213
73 Վրաց ժամանակագրութիւն, էջ 139:

գաներից ելնելով է Աբաղա իլխանը «սիրել-հզորացրել-սատարել» իլխանին: Յիշատակագրութեան համաձայն՝ իլխանի հարստացմանը նպաստել է նաեւ այն հանգամանքը, որ թագաւորը վերջինիս յանձնարարել է «նոգալ նրա տէր Աւագ աթաբեկի աղջկայ [մասին]»: Անկասկած, այս կարեւորագոյն հանգամանքը նպաստել է իլխանի հզորացմանը: Այսպէս, ըստ սկզբնաղբիւրի՝ իլխանի հզորացումը, սոցիալ-քաղաքական փոփոխութիւնը, պայմանաւորուել է նախ՝ մոնղոլ իլխան Աբաղայի հովանաւորութեամբ, ապա եւ Աւագեան տան խնամակալ-կառավարիչ լինելու պարագայով⁷⁴: Ուստի բնագրից կարելի է դատել, որ դէպքերը ծաւալուել են միայն Աբաղա խանի օրօք (1265-1282), վերջինիս իլխանաւորութեան տարիներին, սակայն ստոյգ որեւէ տարեթիւ նշել դժուար է (հաւանական է 1268-1269 թթ.):

Հարկ է անդրադառնալ նաեւ «Քարթլիս ցխովրեբայի» ուսերէն բնագրի վկայութեանը, որը մի փոքր տարբերում է Հայերէն յիշեալ բնագրային օրինակից: Մէջբերենք Ժամանակագրութիւնից առանձնացուող հատուածը. «Որովհետեւ նրա պատրոնի՝ աթաբեկ Աւագի դուստր Խուաշագը խնդրում էր Սաղունին եւ վերջինիս տուեց հեջուրի (կոչում)»⁷⁵: Իմաստով հակադիր (դժուարըմբռնելի) այս վկայութիւնը, ինչպէս տեսնում ենք ընդգծում, յաւելում է, որ Մահկանաբերդի իլխանի պատրոնի (Աւագ Չաքարեանի) դուստր Խուաշագը խնդրում (գուցէ՛ համոզում) էր Սաղունին (ինչ-որ հարցում, որը չի մասնաւորեցուած)⁷⁶: Молила նշանակում է աղաչել, պաղատել, աղերսել, խնդրել:

74 Նոյն տեղում, 129, 139:
 75 Карлис Цхоереба, էջ 381:
 76 Բնագրային այն տարբերութիւնը Ժամանակագրութիւնում նկատում է այլ բնագրի թարգմանութիւնում, մի փոքր այլ իմաստային նրբերանգով (տե՛ս Վրաց ժամանակագրութիւն, էջ 139-140):

րել⁷⁷: Ուստի, այս ուշագրաւ ու բազմախօսուն հատուածի համաձայն՝ կարելի է մեկնաբանել, որ իլխանուհի Խոշաքը խնդրել, աղերսել, ցանկացել կամ աւելի ստոյգ՝ կարող է զգացել վերջինիս սատար, նեցուկ լինելուն, որպէսզի Մահկանաբերդի «հզոր, հուժկու» իլխանը համաձայնի դառնալ Աւագեան տան սենեկապետ-հեջուրը՝ պահպան անձը: Անշուշտ, իլխանուհին, ուղղորդուել է քաղաքական իրավիճակի ակնկալութեամբ: Գուցէ աս վկայութիւնն է հիմք հանդիսացել Լ. Մելիքսեթ-Բեկի համար յայտնելու վերոյիշեալ տեղեկութիւնը, որն առկայ սկզբնաղբիւրներով չի հաստատուում ու հիմնաւորում:

Ցանկալի է պարզել նաեւ տարբեր օգտագործած «սիրեց նրան» արտայայտութիւնը, որը թէեւ գործածուել է «հովանաւորել» իմաստով, սակայն միեւնոյն ժամանակ փաստում է նաեւ իլխանի դիրքի, նրա սոցիալ-քաղաքական կարգավիճակի նշանակալից փոփոխութիւնը վրաց արքունիքում այն աստիճան, որ վերջինիս նոյնիսկ իրաւունք է վերապահուել խնամակալելու Վրաստանի գործերին:

Ուշագրաւ պատմական այդ իրողութիւնը նկատել եւ վերլուծել է Հ. Մարգարեանը: Գիտնականը յաւելել է, որ այդ նշանակալի երեւոյթի մասին է վկայում նաեւ պարսկական աղբիւրը: Պարսից պատմիչ Ռաշիդ ադ Դինի արժէքաւոր վկայութեան համաձայն՝ «Խուաշ Վրաստանի կառավարումը տուեց (շնորհեց, պարգեւեց) Դաւթին ու նրա որդի Սաղունին»⁷⁸: Թէեւ իրանցի պատմիչը շփոթել ու Սաղուն Արծրունուն համարել է վրաց թագաւոր Դաւթի որդի, այնուամենայնիւ, հեղինակի վկայութիւնը

77 Ա. Ս. Ղարիբեան, Ռուս-հայերէն բառարան, Երևան, 1982, էջ 490:
 78 Рашид-ад-Дин, Сборник летописей, т. III, Л-М, 1946, ст. 67. Յ. Մանանդեան, Աշ. աշխ., հտ. Գ, էջ 268, 309. Լ. Հ. Բաբայեան, Աշ. աշխ., էջ 279. Հ. Մարգարեան, Մահկանաբերդի (Սաղունեանների) իլխանական տունը, էջ 23:

հաւաստում է, որ Վրաստանի (հաւանաբար՝ Գիւրջիստանի վիլայեթի) կառավարումը զուգահեռաբար յանձնուել էր վերջինիս:

Պատմագրութեան մէջ պարսիկ պատմիչի այս վրիպակը բացատրուել է՝ «Վրաց արքունիքում իլխանի գրաւած բացառիկ դիրքով ու ազդեցութեամբ»⁷⁹: Սակայն նկատելի է, որ պարսկական յիշեալ յիշատակութիւնը հակասում է վերոնշեալ վրացական բնագրի տեղեկութեանը: Պարսկական բնագրում նշուում է «Վրաստանի կառավարումը», այսինքն՝ թագաւորութիւնը, քանզի Դաւթի կառավարիչ չէր, նա երկրի ժառանգական թագաւոր, արքայից արքան էր, որին շնորհուել, տրուել (հաստատուել) էր թագաւորական իլխանութիւնը: Ուստի նոյն իլխանութիւնը, յիշատակութեան համաձայն, հաւասարապէս տրուել էր Դաւթի «որդի» Սաղունին: Այլ խօսքով՝ Մահկանաբերդի Սաղունին շնորհուել էր Վրաստանի՝ «Գիւրջիստանի վիլայեթի» թագաւորակցութիւնը, գահակցութիւնը եւ ոչ «խնամակալ լինել Վրաստանի գործերին»⁸⁰, ինչպէս արձանագրում է վրացական աղբիւրը:

Ուշագրաւն այն է, որ վրացական նշեալ յիշատակագրութիւնում արծարծուող պատմական եղելութիւնը որոշակիօրէն համընկնում, աղերսուում է հայկական աղբիւրի՝ պատմիչ Ստեփանոս Օրբէլեանի «Նեղափոխեալ ի հայ բան»⁸¹ վկայութեանը, միայն այն տարբերութեամբ, որ ըստ Սիւնեաց պատմիչի իրադարձութիւնը տեղի է ունեցել իլխան Հուլաւուի օրօք (ինչպէս պարսկական աղբիւրի յիշատակութիւնում

79 Հ. Մարգարեան, Մահկանաբերդի (Սաղունեանների) իլխանական տունը, էջ 23: Ամենայն հաւանականութեամբ պարսիկ պատմիչ Ռաշիդ ադ Դինը կարծել է, որ եթէ Դաւթը Վրաստանի թագաւորն է, ապա վերջինիս որդին պետք է լինի թագաւորագուն, ուստի Սաղուն Արծրունուն համարել է նրա որդի:
 80 Վրաց ժամանակագրութիւն, էջ 139:
 81 Ստեփանոս Օրբէլեան, էջ 388:

է): Օրբէլեանի հաւաստմամբ՝ իր հօրեղբայրն է հանդիսացել վրաց թագաւորի գահակիցը. «Սմբատ բազում մեծ երախտիս ցուցանէր նմա առաջի Հուլաւու դահին եւ առաջի մեծամեծացն: Եւ այնքան սիրեաց զնա Դաւիթ թագաւոր, զի հաւասար գլխոյ իւրոյ տեսանէր»⁸²:

Պատմագրութեան մէջ յաճախ համեմատուում են Սաղուն Արծրունու եւ Սիւնեաց իլխան Սմբատ Օրբէլեանի գործունէութիւնները: Այդ առիթով Լ. Բաբայեանը զարգացրել է ուշագրաւ թէ՛զ, ըստ որի՝ Սաղուն Արծրունին ի դէմս Սահիբ Դիւանի ունէր հօր ու ազդեցիկ պաշտպան, Սաղունը անհրաժեշտ էր մոնղոլներին, որպէս Սմբատին հակակշիռ ուժ⁸³: Հեղինակի վարկածից կարելի է հետեցնել, թէ Սմբատ Օրբէլեանն իր գործունէութեամբ աւելի մեծ իլխանաւոր էր, հասարակական աւելի բարձր դիրք ունէր, քան Սաղուն Արծրունին:


Մեր կարծիքով՝ այս վարկածը երկբայելի է եւ անընդունելի մի քանի առումով: Նախ՝ Սմբատ Օրբէլեանը իր ֆիզիկական տուեալներով, առաւել եւս իր գործունէութեամբ ու զբաղեցրած դիրքով բաւականին զիջում է Մահկանաբերդի իլխանին: Վերջինս, վրացական եւ պարսկական աղբիւրների հաւաստմամբ, երկար ժամանակ եղել է վրաց թագաւորին գահակից, աթաբեկ, ամիրսպասալար ու ռեզենտ-խնամակալ: Իսկ Սիւնեաց իլխանը 1256 թ. (եթէ ոչ 1259-ից) մինչեւ 1273 թ. եղել է տէրունի (ինքնուրոյն) իլխան, ինչի շնորհիւ միայն կարողացել է խուսափել մոնղոլական դաժան հարկերից: Իրականում Սմբատ Օրբէլեանի ու Մահկանաբերդի Սաղունի գործունէութիւնը անհամեմատելի է: Վերջինս իր դիրքով, զբաղեցրած պաշտօնով, համբաւով գերազանցում է Սմբատ Օրբէլեանին: Պարսիկ պատմագիր Ռաշիդ ադ Դինն իր մեծածաւալ պատմական երկում

82 Ստեփանոս Օրբէլեան, էջ 421:
 83 Լ. Բաբայեան, Աշ. աշխ., էջ 276:

երկու առանձին դրուագներում յիշատակում է Մահկանաբերդցի իշխանին: Եւ վերջապէս ըստ Միւնենաց պատմագրի (ուս վկայութիւններն անտեսելու կամ նրան չհաւատալու իրաւունք չունենք)¹ հօրեղբայրը՝ Սմբատ Օրբէլեանին հովանաւորել ու սատարել են մոնղոլ Մանգուի խաքանը եւ Արեւելքի ու Հիւսիսի ամենահզօր իշխան Հուլաւուն, որոնք տասնեակ սահիբ դիւաններ ունէին, եւ Կայենեցի Սաղունը «ի դէմիս Սահիբ Դիւան ունէր հօր ու ազնեցիկ պաշտպան»: Սա, մեղմ ասած, համոզիչ չէ: Նման համեմատութիւնը նսեմացնում, փոքրացնում եւ ստուերում է իշխան Արծրունի Սաղուն Բ.-ին: Կարծում ենք, որ իրականում «հակակշռութեան իրավիճակ» երբեք չէր կարող լինել. այդ պարագան անընդունելի է: Մահկանաբերդցի իշխանն իր բնաւորութեամբ նման չէ Սմբատ Օրբէ-

լեանին: Աղբիւրները չեն շեշտում վերջինիս սոցիալ-քաղաքական բարձր դիրքը, ինչից պէտք է հետեւցնել, որ նա բաւականին համեստ, դուսպ ու հաւասարակշիռ անձնաւորութիւն է: Մինչդեռ իր ժամանակակից իշխանաւորները բնորոշուում են՝ «արքայ, արքայաշուք, բարեպաշտ, ինքնակալ» մակդիրներով:

Աւարտելով մեր խօսքը՝ նշենք, որ վրացական սկզբնաղբիւրների վկայութեամբ՝ Մահկանաբերդցի Սաղուն (Բ.) Արծրունին, 1250 թ. սկզբին դառնալով Աւազեան տան վերակացու, արդէն 1268/69 թթ. մեծ ճանաչում է ունեցել «Գիւրջիստանի վիլայեթում», մոնղոլական իշխանութեան արքունիքում: Մոնղոլները նրան են վստահել նաեւ վիլայեթի թագաւորական գործերի կառավարումը:



լեանին: Աղբիւրները չեն շեշտում վերջինիս սոցիալ-քաղաքական բարձր դիրքը, ինչից պէտք է հետեւցնել, որ նա բաւականին համեստ, դուսպ ու հաւասարակշիռ անձնաւորութիւն է: Մինչդեռ իր ժամանակակից իշխանաւորները բնորոշուում են՝ «արքայ, արքայաշուք, բարեպաշտ, ինքնակալ» մակդիրներով:

Աւարտելով մեր խօսքը՝ նշենք, որ վրացական սկզբնաղբիւրների վկայութեամբ՝ Մահկանաբերդցի Սաղուն (Բ.) Արծրունին, 1250 թ. սկզբին դառնալով Աւազեան տան վերակացու, արդէն 1268/69 թթ. մեծ ճանաչում է ունեցել «Գիւրջիստանի վիլայեթում», մոնղոլական իշխանութեան արքունիքում: Մոնղոլները նրան են վստահել նաեւ վիլայեթի թագաւորական գործերի կառավարումը:

ԿՈԶՄԱ ԿՐՕՆԱԻՈՐԻ «ՍԵՆԱՔՍԱՌԸ»¹ (1203 թ.)

Գեորգ Ղազարեան

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի Քիւրտեան հաւաքածոյի թիւ 99 Աւետարանն իր տեսակի մէջ եզակի մատենաներից է, քանի որ պատկանում է ուղղափառ (օրթոդոքս) հայերի («հայ հոռոմների») աւանդոյթին²: Սոյն գրչագիրը, ինչպէս երևում է յիշատակարանից, գրուել է 1203 թ. գրիչ Յովհաննէսի ձեռքով: Ստացողներն են երկու եղբայրներ՝ կրօնաւոր քահանաներ՝ միւնոյն «Կոզմա» անունով: Գրութեան վայրն անյայտ է: Չեռագիրն առաջին անգամ նորոգուել է 1462 թ. հայ հոռոմ քահանաներ պապայ Արսէնի և պապայ Սամուէլի հոգածութեամբ, և ապա՝ Ժէ դ.: Բացի ծաշու ընթերցուածքներից (որոնք դասաւորուած են բիւզանդական ծիսակարգի համաձայն) և մի քանի այլ միւլորներից, Աւետարանն ընդգրկում է նաև «Սենաքսառ»³ կոչուած

միւլորը, որի «յարմարողը»՝ կազմող իմբագիրը, ստացող եղբայրներից մէկն է: Կոզմայի «Սենաքսառը» սրբոց տօների ցուցակ է, որտեղ տօները դասուած են ըստ օրերի՝ սկսած սեպտեմբերի 1-ով և աւարտած օգոստոսի 31-ով⁴: Սրբերի անուններից բացի «Սենաքսառը» նշում է նաև իւրաքանչիւր օրուայ ծաշու ընթերցուածքները⁵: Ըստ էութեան՝ Տօնացոյց է (Εορτολόγιον), որն անշուշտ հետևում է բիւզանդական աւանդոյթին՝ ունենալով հանդերձ առանձնայատկութիւններ: Հետեւաբար, սխալուել է Յ. Քիւրտեանը, երբ այս «Սենաքսառը» հասկացել է «Յայսմաւուրք» իմաստով, և շտապել եզրակացնելու, թէ «Կոզմայի կազմած Հայ-Հոռոմ Յայսմաւուրքը աւելի հին է՝ քան ինչ-որ ծանօթ էր ցարդ»⁶: Նմանապէս, լուսահոգի Պարոյր Մուրադեանը, որը հնարաւորութիւն չի ունեցել անձամբ տեսնելու և ուսումնասիր-

1 Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անկիւն արքանայր Բ. Եղիա Քիւրտեանին և միաբան Բ. Անտոն-Չաքէոս Գրիգորեանին՝ Կոզմա կրօնաւորի «Սենաքսառի» ձեռագրի լուսանկարները ուսումնասիրութեան նպատակով մեզ սիրաշօծար տրամադրելու համար: Խորհրդատութեան համար շնորհակալութիւն ենք յայտնում փիլիսոփայական գիտութիւնների թէկնածու, Երևանի Մատենադարանի աւագ գիտաշխատող տկն. Օլգա Վարդապետեանին:

2 Մատենան առաջին անգամ հետազօտել է Գոյն Ինքն Յ. Քիւրտեանը (տե՛ս Յ. Քիւրտեան, «Քիւրտեան հաւաքման թիւ 99 Աւետարանը (Հայ-հոռոմ գրչագիր, 1203 թուականէն), Բագմալէպ, 1974, թիւ 3-4, էջ 404-410:

3 Յունարէն Տոնաչարիոն (βιβλίον)՝ «հաւաքոյթի գիրք»: Այսպէս են կոչուում արքայապետական ժողովածուները՝ առանձին և կամ Ծարակնոցի (Μηναίον) մէջ ամփոփուած, որոնք ընթերցուում են Աւաւորութեան ժամերգութեան մէջ՝ հաւատացելոց հաւաքոյթում (Տե՛ս I. E. Καργαγιαννόπουλος, Πηγαί της Βυζαντινής Ιστορίας, εκδ. «Πορναράς», Θεσσαλονίκη ⁽⁵⁾1987, էջ 63-64. Π. Γ. Νικολό-

πουλος, «Συναξάριον», ΘΗΕ (Θρησκευτική και Ηθική Εγκυκλοπαίδεια), Բ. 11 (1967), 554-556. Δ. Γ. Τσάμης, Αγιολογία της Ορθόδοξης Εκκλησίας, εκδ. «Πορναράς», Θεσσαλονίκη, 2010, էջ 32-33. Α. Παπαδόπουλος Αντώνιος, Αγιολογία, τ. I, Θέματα γενικά, ειδικά και Εορτολογίου, εκδ. «Πορναράς», Θεσσαλονίκη, 1996, էջ 18-20:)

4 Նշանաւոր վարքարան Հ. Դելեէն (1859-1941 թթ.), որը հրատարակել է Կոստանդնուպոլիսի «Յայսմաւուրքը», այս տեսակի յուշարձանները աւանդում է synaxarium minus (տե՛ս H. Delehaye, Propylaeum ad Acta Sanctorum, Novembris, Synaxarium Ecclesiae Constantinopolitanae, Bruxelles, 1902, էջ V):

5 Քանի որ այստեղ «Սենաքսառը» մեզ հետաքրքրում է լոկ որպէս արքայապետական յուշարձան, սոյն յօդուածի մէջ վերծանում ու հրատարակում ենք միայն սրբոց յիշատակութիւնները՝ զանց առնելով Ծաշու ընթերցուածքների վերաբերեալ նշումները և թողնելով դրանք հետագայի հրատարակման:

6 Քիւրտեան, նշ. աշխատութիւն, շՇ 407: